ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Բյուջեն, լինելով համայնքի եկամուտների ձեւավորման ու ծախսերի կատարման տարեկան ֆինանսական ծրագիր, ուղղված է ՏԻՄ-երին օրենքով վերապահված լիազորությունների շրջանակներում համայնքային ծրագրերի իրականացմանը:

Գավառ համայնքի 2023թ. բյուջեն մշակվել է՝ հիմք ընդունելով վարչական շրջաններում իրականացված հանրային քնարկումների արդյունքները:

Համայնքի գործունեությունը մեծապես կախված է բյուջետային գործընթացի լավ կազմակերպումից, բյուջեի եկամուտների արդյունավետ հավաքագրումից եւ միջոցների խնայողական օգտագործումից:

Գավառ համայնքի 2023թ. բյուջետային քաղաքականության հիմնական ուղղություններն են՝

- ✓ *Բարելավել համայնքի ֆինանսական վիճակը՝ ճշտելով հողի հարկի եւ գույքահարկի բազաները, բարձրացնելով սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը եւ նպատակային օգտագործելով բյուջետային միջոցները,*
- ✓ *Բարձրացնել ՏԻ համակարգի, համայնքի աշխատակազմի եւ համայնքային կազմակերպությունների աշխատանքի արդյունավետությունը,*
- ✓ *Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների մակարդակը եւ որակը,*
- ✓ *Իրականացնել կրթության, մշակույթի եւ սպորտի բնագավառների համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերագինման եւ այլ աշխատանքներ,*
- ✓ *Կապիտալ ներդրումներ կատարել համայնքի բնակարանային-կոմունալ տնտեսության, բարեկարգման եւ ճանապարհային տնտեսության բնագավառներում,*
- ✓ *Աշխուժացնել համայնքի մշակութային, մարզական եւ հասարակական կյանքը,*
- ✓ *Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր:*

Գավառ համայնքի 2023թ. զարգացման հիմնական ուղղությունները միտված են բնակչության կենսական շահերի ապահովմանը, շրջակա միջավայրի պահպանմանը, համայնքի հարմարավետ ու բարեկեցիկ միջավայրի ստեղծմանը, համայնքային ենթակառուցվածքների արդիականացմանն ու զարգացմանը, ինպես նաեւ համայնքի գլխավոր հատակագծին համապատասխան քաղաքաշինական ծրագրերի իրականացմանը:

Ես դիմում եմ համայնքի բնակիչներին, ավագանուն, աշխատակազմի եւ համայնքային կազմակերպությունների աշխատակիցներին՝ շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2023թ. բյուջեի միջոցների գոյացման, դրանց նպատակային եւ հասցեական օգտագործման, բյուջեի կատարման եւ վերահսկման ուղղություններով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Գ. Ե. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ